

Կրոնական անգլիալեզու մամուլի շարքում աչքի էին ընկնում ամերիկահայ ավետարանական եկեղեցու հրատարակությունները: Առաջին այդպիսի պարբերականներից էր Նյու Յորքի Հայ ավետարանական եկեղեցու տեղեկագիրը՝ «The Armenian Evangelical Church of N.Y. Bulletin»-ը (1912 թվականից, Նյու Յորք):

ԱՄՆ-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության անգլիալեզու հրատարակություններից էին «Hoosharar»-ը (1914 թվականից, Սեդլ Բրուք), «Armenian General Benevolent Union Bulletin»-ը (1921 թվականից, Յունյուն Սիթի): Ամերիկահայ ուսանողական միությունը նույնպես ուներ իր անգլիալեզու պաշտոնաթերթը՝ «The Armenian Student»-ը (1919 թ., Նյու Յորք):

ԱՄՆ-ում հաստատված կիլիկեայ թրքախոս հատվածը ևս ունեցել է իր պարբերական մամուլը: Այդտեղ նրանց համար հայերենով և հայատառ թուրքերենով լույս են տեսել «Կիլիկիա» (1916 թ., 1917-1919 թթ., Նյու Յորք), ինչպես նաև միայն հայատառ թուրքերենով «Կիլիկիա Սալնամեսի» (1918 թ., Նյու Յորք), «Բահնիմա» (1919-1933 թթ., Նյու Յորք) բազմաբնույթ պարբերականները:

ԱՄՆ-ի խոշոր քաղաքներում հայ մամուլի ի հայտ գալով սկզբնավորվել են ամերիկահայ առաջին տպարանները, ուր, պարբերականներից բացի, հրատարակվել է նաև գաղութահայ բազմաբնույթ գրականություն: Այսպես, Ջերսի Սիթիում գործել են «Արեգակ», «Հ. Էկինեան», Նյու Յորքում «Հ. Էկինեան», «Կոչնակ», «Արմենիա», «Երիտասարդ Հայաստան», «Արարատեան», «Մ.Ս. Գաբրիելեան», «Արաքս», «Էլմաս Սաթին», «Լրաբեր», «Հայրենիք», «Հայրենիք» լրագրի», Բոստոնում «Հայրենիք» լրագրի», «Ձայն հայրենեաց», «Ազգ» լրակ», «Շանթ», «Թունանեան եղբայրներ», «Կիլիկիա», «Պայքար» լրագրի», «Փրես», «Հի-Մասարեդ», «Փրկութիւն», «Նոր օր», Փրովիդենսում «Պահակ», Չիկագոյում «Երիտասարդ Հայաստան», Կալիֆոռնիայում «Ա. Տունանեան», Ֆիլադելֆիայում «Միածինեան եղբայրներ», Դետրոյտում «Հիմարար», Ռոքսբերիում «Փիլիպոսեան և Տիրանեան», Բեյսիդում «Երիտասարդ Հայաստան» տպարանները և այլն:⁵

Այսպիսով, ԱՄՆ-ում սկզբնավորված ու ծավալված հայ մամուլն ու տպագրությունը, տարիների ընթացքում ենթարկվելով ժամանակի, միջավայրի, ինչպես նաև ներգաղութային կյանքի տարաբնույթ պահանջների անմիջական ազդեցությանը, կազմակերպվել ու դարձել են օտար ափերում հայապահպան կարևոր գործոններ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Mirak, R. *Tom Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I*. Cambridge, 1983, p. 248.
- 2 Մուշեղ Եպիսկոպոս, *Ամերիկահայ տարեցոյցը*, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 268: Wynar, L.R., Wynar, A. *Encyclopedic Directory of Ethnic Newspapers and Periodicals in the United States*. Littleton, 1976, p. 16.
- 3 Այսուհետև հիշատակվող պարբերական մամուլի վերաբերյալ տվյալները, ի շարքս հիշատակվող այլ գրականության, վերցված են նաև հետևյալ ժողովածուներից. Բաբլոյան Մ.Ա., *Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցանկ (1794-1980)*, Երևան, 1986: Լեւոնեանց Գ., *Հայոց պարբերական մամուլը. Պատմական տեսություն սկզբից մինչև մեր օրերը (1794-1894)*, Ալեք. սամբրապոլ, 1895: Լևոնյան Գ., *Հայ պարբերական մամուլը. Լիակատար ցուցակ հայերեն լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934)*, Յերեվան, 1934: Կարապետյան Հ.Ռ., *Լիակատար ցուցակ հայերեն լրագրության որոնք կը գտնուին Մխիթարեան Մատենադարանին մէջ ի Վիեննա, 1794-1921*, Վիեննա, 1924: Կիրակոսյան Ա., *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)*, Երևան, 1970: Պետրոսյան Հ., *Հայ պարբերական մամուլի բիրիոգրաֆիա (1794-1900)*, Կ. Ի, Երևան, 1956: Լույսի, *Հայ պարբերական մամուլի բիրիոգրաֆիա (1900-1956)*, Կ. Ի, Երևան, 1957: Պոստոնեան Հ.Ս., *Հայ մամուլը տասներկինգ տարուան մէջ. 1894-1909 թթ.*, Վենետիկ, 1909:
- 4 Մուշեղ Եպիսկոպոս, *Գշ. աշխ.*, էջ 145: Malcom, V.M. *The Armenians in America*. Boston, Chicago, 1919, p. 124.
- 5 Կիրակոսյան Ա., *Գշ. աշխ.*, էջ 617, 618: Բաբլոյան Մ.Ա., *Գշ. աշխ.*, էջ 410: Թեոփիլ, *Տիպոգր. Կ. Պոլսի*, 1913, էջ 186-188:

КНАРИК Р. АВАКЯН - АМЕРИКАНО-АРМЯНСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ И ТИПОГРАФИИ (1888-первая половина 1920-ых годов) - В деле сплочения армянских эмигрантов, выехавших в США в течение десятков лет в следствие общественных, экономических, историко-политических и культурных обстоятельств, для их интеллектуального и духовного развития, а также в образовании национально-самосохраненной общины, стержневую роль и значение имели местные армянские типографии и периодическая печать (в 1888 г. вышла в свет первая американо-армянская газета – ежемесячный ТаргакУ/ТСолнышкоУ/).

Издающаяся в США трехязычная (армянский, английский, написанный на армянском – турецкий) разнородная периодическая – печать и литература (национальная, научная, художественная, философская, общественная, политическая, религиозная, церковная, экономическая, торговая, по здравоохранению, детская, молодежная, образовательная, юмористическая и т. д.) издавались как с помощью отдельных частных лиц, так и с помощью партий, организаций, обществ и ассоциаций.

ՀՐԱԶԴԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(պատմաբանասիրական ակնարկ)

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» որպես տեղանուն նշված են.

«Ախտա» անունով մեկ օկրուգ՝ Արևմտյան Հայաստանում, յոթ գյուղեր՝ չորսը Արևմտյան Հայաստանի Երզրումի նահանգի Բայազետ գավառում (Մեծ Ախտա, Վերին Ախտա, Միջին Ախտա, Ներքին Ախտա), մեկը Վայոց Ձորի (Վայքի շրջանում) և երկուսը նախկին Ախտայի շրջանում ա) Ներքին Ախտա (ներկա Զրազդան), բ) Վերին Ախտա (ներկա Լեռնանիստ), որը նախկինում կոչվել է Ինակդաղ (Մենակսար գյուղից հարավ-արևելք Գեղամա լեռնաշղթայի բազուկ Մենակսարի անունով), Կոթգորան, Քոթղորեն, Բոզու դաղ, Ինաքդաղ, Ինեքդեղ, Կովասար (բնակիչների նախնիները եկել են Պարսկահայաստանի Խոյի, Մակուի և Սալմաստի շրջաններից):

Ախտախան անունով մեկ գյուղ՝ Ջանգեզուրի գավառի Մեղրու շրջանում (ներկայիս գյուղ Շվանիծոր), Ախտախանա-Ախտախան անունով երկու գյուղ՝ մեկը Պարսկաստանի Սալմաստ գավառում (Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք Դիլման քաղաքից 8 կմ արևելք), մեկը Ջանգեզուրի Կապանի շրջանում (ներկայումս գյուղ Չորաստան), Ախտարաշան անունով՝ մեկ գյուղ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում:

Ախտա կամ Ախտաչայ անունով նշված են նաև երեք գետ՝ Արածանիլի ավազանում (սկիզբ է առնում Հայկական Պար լեռնաշղթայի հարավային լանջերից Վերին Ախտա գյուղի մոտակայքից և թափվում Արաքս), Արաքսի ավազանում (սկիզբ է առնում Վայքի լեռնաշղթայից և թափվում Արաքս), Զրազդան գետի ավազանում (սկիզբ է առնում Վերին Ախտա (ներկա Լեռնանիստ) գյուղի վերևի շրջակա աղբյուրներից և թափվում Զրազդան գետը: «Ախտա գետի անունը առաջացել է հին Աղտից ձոր անվան աղավաղումից 5-վերստանոց քարտեզում նշված է Ախտաչայ, իսկ 10-վերստանոցում՝ Ախտչայ» (Տեղանունների բառարան, հատ. 1, էջ 122):

Կան նաև երկու լեռ՝ մեկը Հայկական Պարի կենտրոնական հատվածում, մեկը Վայքի (Վայոց ձորի) շրջանում, մեկ լեռնանցք Հայկական Պարի կենտրոնական հատվածում (Կողբից հարավ-արևմուտք) և մեկ ձոր (Կիրճ)՝ Արաքս գետի Արփա վտակի ավազանում:

Ներքին Ախտա գյուղը՝ 1930թ. վերանվանվում է Ներքին Ախտայի շրջանի շրջկենտրոն, իսկ 1959 թ.՝ ք. Զրազդան: Հետո Զրազդան քաղաքին, որպես թաղամասեր միացվել են Աթարբեկյան (Քարվանսարա-Վանատուր), Աղբյուրակ (Աղփարա), Մաքրավանք, Ջրառատ

(Ոնդամալ-Մելքի գյուղ) և Կաքավաձոր (Ֆառուխ) հինգ գյուղերը, որոնց մասին ամենահին տեղեկությունները քաղել ենք Հովհաննես եպիսկոպոս Շախաթունյանցի: «Ստորագրություն կաթողիկե էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ» (1842թ.) և Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց նախիջևանցու «Տեղեկագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետ գավառ աշխատություններից:

Ախտա-Զրազդանի շրջանի բնակիչները եկել են Խոյից, Ալաշկերտից, Մակուից, Սալմաստից, Վանից, Բայազետից, Կարսից, Սասունից: Կոնկրետ Զրազդան քաղաքին միացված վերոհիշյալ հինգ գյուղ-թաղամասերի բնակիչների նախնիները ներգաղթել եկել են. Աղբյուրակ-Աղփարայի բնակիչները՝ Մակուի գավառի Օղակ գյուղից 1829թ. (Օղակից են գաղթել նաև Քաղսի գյուղի բնակիչները 1830թ.) և գյուղը հիմնել ու Աղբյուրակ են անվանել այդ տեղում՝ կամուրջից դեպի աջ, բլուրի հարավային ստորոտում շատ աղբյուրներ լինելու պատճառով (այդ աղբյուրները ներկայումս մնացել են Զրազդան լճի տակ): Մաքրավանքի բնակիչները՝ Մակուից ու Հին Բայազետից, Ջրառատ-Ոնդամալի բնակիչները՝ Ալաշկերտից, Կաքավաձոր-Ֆառուխի բնակիչները՝ Վանից ու Մակուից, իսկ Քարվանսարա-Վանատուրի բնակիչները՝ Վանի նահանգի Աթաղա, Աղբակ, Հայոց Ձոր (խոշաբ) գավառներից և մի քանի տուն էլ Մուշից, Մակուից ու Կարսից:

Պատմագիտական գրականության մեջ հիշվում է Ախտարաշան անունով բնակավայր: Կազմված է երկու բառերից՝ «*ախտար*» և «*աշան*»:

Ըստ Հ. Աճառյանի՝ *ախտար* - «աստղ, բախտ, աստղահմայ, ժամագետ»։ դրանից են՝ *ախտարակ* - «բնախոս, փիլիսոփա, բնություն, ի բնե, բնականից» և «*ախտարմուլ*» - աստղերը դիտելով գուշակություն անող, աստղերը հաշվող (ՀԱ ՀԱԲ 1971թ., հատ 1, էջ 100-101):

Է. Աղայանի մեկնությամբ *ախտարը* ծագել է «*ախտարք*»-ից, որ նշանակում է «աստղագուշակություն» (Էդ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» հ.1, էջ 12): «Ախտար» կապված է պահլավերեն ախտար «կենդանակերպ, համաստեղություն» և պարսկերենի *ախտար* «աստղ, բախտ» բառերից: Ուշագրավ են *ախտարք-ախտար* նշանակում է «աստղագուշակություն, բախտի գուշակություն աստղերի միջոցով»: Այդ ախտարական «արվեստը» կիրառողներին անվանում էին դյուք, թովիչ, կախարհ, մոգ, վիուկ, հմայ, ձեռնածու, աղանդավոր և այլն: Այդ արվեստը կապված լինելով աստղաբաշխության հետ, կապված էր նաև բժշկական-բուժական արվեստի հետ՝ օգտագործելով բույսերի և հանքային նյութերի բուժական հատկությունները, հիվանդներին ներշնչելու մեթոդները և այլն:

Դեղաբան-բանասեր Կ. Բասմաջյանի կարծիքով «ախտարք-ախտարը» հավանաբար «էխթարաթ - ե բաղիդի» կոչված պարսկերեն բժշկարանի հայերեն թարգմանությունն է (ՀՍՀ, հատ. 1, էջ 204): Իսկ «ա- շան»-ը կալի մեջ փռած՝ կալսելու հացահատիկն է (եղ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառա- րան» հ. 1, էջ 88):

Ախտա բառն ըստ էության կապ չունի **ախտակալը** նշանակության հետ, այլ, ինչպես ցույց են տալիս 3. Աճառյանի, է. Աղայանի և այլոց բացատրությունները, կապվում է հեթանոսական շրջանի աստղագուշակ, աստեղահմա, թուփչ ծիսապաշտամունքային երևույթների հետ, որոնք անպայման ունեցել են իրենց իրա- կան-երկրային հիմքերը: Որ Դրագդան գետի ակունքների մոտ (այժմյան Դրազդան քաղաքի շրջակայքում) կան բազմաթիվ բուժիչ աղբյուրներ, վկայում են այն մասին, որ Ախտա տեղանունը գալիս է վաղնջական ժամանակներից և կապված նրա՝ «աստղագուշակ, աստղահմա» հավանաբար նաև «բուժող, հմայող» ի- մասունքների հետ:

1. Ներքին Ախտա - ա) Ըստ Շախաբունյանցի «Ներքին Ախտայ, տունը 65, եկեղեցին յանուն սուրբ խա- չի: Աստ է իջևան անցորդաց յարքունի ճանապարհին» (էջ 205):

բ) Ըստ Սմբատյանցի «Դարաչիչակ գավառ որ է Ծաղկածորն»: «Ներքին Ախտայ - 1860թ. ունեցել է 117 տուն, 1870թ. 151 տուն»: «Ներքին-Ախտայի ներքին թաղում բնակվում են 38 տուն մալական, և ուր է ար- քունի իջևանը, վերին թաղում բնակվում են 75 տուն հայ գերդաստանը: Եկեղեցին յանուն Ս. Խաչին՝ նո- րոգ շինեցին 1861թ.: Գյուղն ուներ մի փոքրիկ աղբյուրի ջուր, որով շատ մեղուքամբ կառավարվում էին միայն բնակիչքն, իսկ անասունքն ջանկու գետի ջրովն, որը գյուղից մեկ ու կես վերստ հեռի, ձորի միջով է գնում» (էջ 88): Նշենք, որ այս աղբյուրը ներկայիս Կոճոռ թաղամասի բնական աղբյուրն է, որը ջուր է մա- տակարարում բնակիչներին:

Բաֆֆին 1877թ. սեպտեմբեր-նոյեմբերին Թիֆլիսից մինչև Ագուլիս ճանապարհորդության ժամանակ անցել է այն վայրերով, ուր տեղավորված էին 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով բնա- վեր դարձած հայ գաղթականները: Սեպտեմբերի կեսերին դուրս գալով Թիֆլիսից՝ Բաֆֆին Դիլիջանի ան- տառում հանդիպում է պատերազմում վերավորված հայ կամավորներին, գրուցում և գրի առնում նրանց պատմածները: Իսկ Ախտայում նա հանդիպում է Ալաշկերտի հովտի գյուղերից մեկի տանուտեր Մկրեին, գրուցում նրա հետ: Լսելով Ալաշկերտի հայերի բնաջնջման պատմությունը և Ախտայում տեսնելով նաև Ա- լաշկերտի գաղթականների վիճակը՝ իր ուղեգրություններում (Բաֆֆի «Երկերի ժողովածու», 1987թ., հատ. 9, էջ 173) նա գրում է. «Հասնելով Ախտա հայոց գյուղը, փոստայի իջևանում տեղ չգտա գիշերելու... Ախտա գյուղը մալականների գաղթաշենքից բաժանվում էր մի փոքրիկ գետով, հարկավոր էր միայն կա- մուրջը անցնել, մյուս կողմում հայոց տներն էին: Այս գյուղը յուր մերձակա գյուղերի հետ համեմատելով, բոլորի Փարիզն է. թե՛ յուր շինություններով և թե՛ բնակիչների բարեկեցությամբ գերազանցում է ամենից, որովհետև գտնվում է մեծ ճանապարհի վերա»:

(Բաֆֆի «Երկերի ժողովածու» 1987թ., հատ. 9, էջ 189): Այդ «փոքրիկ գետը» «Ախտաչայն» է, որը այժմ կա, պահպանված է նաև «կամուրջը», որի տակ կա մի աղբյուր, որը կոչվում է «փոշտի» աղբյուր, կա նաև միհարկանի «մալականների գաղթաշենքը» (ավարման- գորանցը), որը գտնվում է նախկին Կենցաղ սպասարկման վացքատան կողքին և սովետական տարիներին օգտագործվել է որպես դպրոց: Սակայն Բաֆֆու կողմից «Փարիզ» անվանված Ախտայում, չափազանց վատ պայմաններում գտնվում են տեղա- վորված եղել Ալաշկերտից եկած գաղթականները:

Ե. Ախտա գյուղից 3 կմ դեպի արևելք, «Չամանգյուլ» անունով տեղանքում կա հին բնակատեղի՝ «Ամե- նափրկիչ Մարիամ Աստվածածին» եկեղեցի-մատուռի շենքերի, ձիթհանքի, վերին Ախտայի «Ավազան» աղբյուրի ջրերի հավաքման ավազանի և գերեզմանների ավերակներով:

2. Զամանգյուլ բառը բարդ բառ է՝ կազմված լինելով՝

1. Զաման-Քիմոն-Քեմոն-ից (խոտաբույս է, որի աղանձած ծեծած սերմերից սխտորով պատրաստում են խյուս և քսում ապուխտի վրա. (եղ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» հատ. 2, էջ 1154, 1564): 2. Գյուլ (թուրքերեն բառ է, հայերեն կոչվում է վարդ): Ուրեմն այդտեղ աճել է Զաման-Քեմոն-Քիմոն խոտաբույս-ծաղիկը, որի անունով էլ կոչվել է բնակատեղին:

2. Աղփարայ - ա) Շախաբունյանց (էջ 190) - տունը 29, բ) Սմբատյանց (էջ 342) - գյուղը բաղկանում էր 33 հայ գերդաստանից, իսկ եկեղեցին յանուն Սուրբ Ստեփանոսի (Ըստ թ. 86 էջի) Ծաղկածոր (Դարաչի- չակ) գավառի գյուղերի ցուցակի բնակիչները գաղթել են իրանից:

3. Մաքրավանք - ա) Շախաբունյանց (էջ 190)՝ «գյուղ, յի՛րում բնակին յազգե հայոց՝ տունը 28, եկեղե- ցին յանուն Սուրբ Աստվածածնի», բ) Սմբատյանց (էջ 342-343)՝ «Մաքրավանք... որը Մաքրավանք եկեղե- ցու անունով է, շինված 1295թ.: Գուցե Մաքրակեաց ճգնափորաց վանք լինի, կամ բորոտության և այլ ցա- վոց մաքրող վանք լինի: Բանկանում է 37 տուն բնակչոք (ըստ նույն ցուցակի բնակիչները գաղթել են Մա- կուից): Այս գյուղի վանքը կոչվել է նաև՝ ըստ Շախաբունյանցի (էջ 190) «էշեքղուտուրան» (էշի պատժող), ըստ Սմբատյանցի (էջ 344) «Շահողուտուրան» (Շահի պատժող): Երբ պարսից Շահը քանդել-փակել է եկե- ղեցին և քարերը տարել Զրազդան գետի վրա կամուրջ կառուցել, դրանից հետո ինքը գծվել, ստացել է կա- տաղություն հիվանդություն: «Եկեղեցիք կամ մեհաստան Կեչառուաց» ևս կան կառուցված տաճարքն չո- րեքին» (էջ 190-191): Իսկ Սմբատյանցը Ռնդամալ գյուղից հետո նկարագրում է «Ջանգըրու-Կեչառուաց կամ Էջառիս չորս, հինգ փառավոր վանքերը» (էջ 346-397), որոնց մասին կնշենք առանձին:

4. Ռնդամալ - ա) Շախաբունյանց (էջ 203)՝ «507, տունը 115, եկեղեցին յանուն Ս. Կարապետի»: բ) Սմ-

բատյանց (էջ 345-346)՝ «Ռնդամալ» քրդերեն նշանակե Գեղեցիկ տուն, որին և Մելիք գյուղ անվանեն յա- նուն Մելիք Շեկոյի, որ 1830թ. գաղթականության առաջնորդն է եղել ժողովրդոց Ալաշկերտից մինչև Ռնդա- մալ: 137 տուն հայ բնակչոք, եկեղեցի յանուն ս. Կարապետի, հին և անձև 1831թ. շինված: Գյուղի արևմտյան ծայրում միանում են միմյանց հետ Ջանգի գետի երկու ճյուղերը՝ մինը Սևանա ծովիցը, մյուսը՝ Պղնձահանքի ձորիցը (որ հնունդ Աբասածոր անուն ուներ) այժմ (Միսխանայ): Գյուղի դիրքը ավելի ընդար- ձակ է յարմար՝ քաղաք շինելու, մանավանդ մերձավորությամբ Ջանգըրուի (Դարաչիչակ-Ծաղկածոր) ամա- ռանոցին, որտեղ են Կեչառուաց կամ Էջառուաց վանքերը (էջ 296): Ջանգուի և Միսխանայի (Պղնձահան- քի) ջրի խառնուրդած տեղումը լինելով շատ նման է ջրաշատ Գորի քաղաքին» (նշենք, որ այս ջրաշատու- թյան պատճառով հետագայում այս գյուղը կոչվեց Ջրառատ): «Ռնդամալի ամարանոցի աղբյուրը, որ Ալի- բեկու (այժմ Թեղեմիս) լեռան արևելյան կուրծքի վերայ է՝ անտառապատ մասնից բարձր, կատարյալ դեղ ու դարման է հիվանդի...» (էջ 296):

Ռնդամալից արևմուտք Աբասածոր-Պղնձահանք-Միսխանայի ձորից ներքև, Թայչարուխ Մեղրածոր գյուղից (ըստ Սմբատյանցի Թայչարուխի, Սևանի շրջանի Չիբուխլու և Աշտարակի շրջանի Դարաշորան- Արայի գյուղերի բնակիչները ներգաղթել-եկել են հին Բայազետի Արծափ բերդ գյուղից) վերև Թաքարուլ (ըստ «Հայստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի»՝ Տակյալիք (հատ. 2, էջ 428) գյու- ղում է գտնվում Արտավազայ ապարանք-վանք-անապատը (Սմբատյանց, էջ 163, 364), որի անունով էլ այժմ գյուղը կոչել են Արտավազ: (Ըստ Սմբատյանցի «Նոր- Պայազիտու գավառի վանքներից ցուցակի, կառուցվել է 1161թ. (Տեղեկագիր էջ 138): Թայչարուխ-Մեղրածորից դեպի հյուսիս կա մի ձոր՝ «Մարիամու ձոր-Մեյրամ դարասի, որն իր անունն ստացել է այն ծաղկիցը, որ Մարիամու ծաղիկ ասեն, այդ ձորամեջը լիքն է այդ ծաղկիցը, և կամ՝ այն քայքայված վանքի անունովը, որ այս ձորամիջին էր» (Սմբատյանց, էջ 369): Եվ վերջապես Ռնդամալից արևմուտք, Թայչարուխ-Մեղրածոր գյուղից հարավ անտառի մեջ բլուրի վրա կա մի եկեղեցի «Ամենայն տեսողաց, հարավային որմին վերայ ծայրե ի ծայր երեք տող գրված՝ վրաց եկեղեցական տառերով «Խուցուրի» անվանեալ, որ ըստ ամենայն պատմագրաց՝ մեր Մեսրոպ թարգմա- նիչն է յորինել՝ յամի Տեառն 410. բավականին նմանութիւն ունի մեր գլխագրերին» (Սմբատյանց, էջ 368): Այդ եկեղեցին շինել է Իվանե Աբաբակ Ջաքարյանը «Թայչարուխի պղնձահանքի վերայ բանող վրացի վարպետաց և մշակաց համար» (Սմբատյանց, էջ 369): «Կիրակոս պատմիչը ասում է, որ այս վանքում է թաղվել Իվանե Ջաքարյանը վախճանվեցավ և Իվանե՝ եղբայր Ջաքարեի և թաղվեցավ ի Պղնձահանքն ի դուռն եկեղեցվոյն՝ զոր շինեաց ինքն առեալ ի Հայոց՝ վրացի վասն արար»: Իսկ Իվանեի եղբայր Ջաքարե Ջաքարյան ամիրսպասալար - Հայոց և վրաց զորքերի գերագույն գլխավոր հրամանատարին «թաղել են Սանահին եկեղեցում, առաջի դրաց խորանին յահեակ կողման» (Սմբատյանց, էջ 368):

5. Ֆարուխ-Կաքավածոր ա) Շախաբունյանց (էջ 203)՝ «505, տունը 27, եկեղեցին՝ Ս. Ստեփանոս, բ) Սմբատյանց (էջ 369)՝ «Ֆարուխ գյուղը Ռնդամալայ հանդեպ մի ձորամիջի է, բաղկանում է 51 տուն հայ բնակչից, եկեղեցին Ս. Ստեփանոս շինված 1855 թ.» (ըստ էջ 86-ում տրված Ծաղկածոր-Դարաչիչակ գա- վառի գյուղերի ցուցակի, բնակիչները ներգաղթել-եկել են Մակուից):

Քարվանսարա - այն այժմյան պատմական-հնագիտական տվյալների Զրազդան քաղաքի ամենահին թաղամասն է, որը հայտնի է «Զրազդան գետի ափերին տարածվող հնադարյան դամբարանադաշտերով: Չախ ափի դամբարանների պեղումների ժամանակ հայտնաբերվել են մ. թ.ա. VIII- VI դդ. խեցեղեն, բրոն- զե գործիքներ և զենքեր, ոսկե, արծաթե և ապակե զարդեր, աչ ափի դամբարաններից՝ ավելի ուշ շրջանին (մ.թ.ա. IV դար) բնորոշ առարկաներ» (ՀՍՀ, հատոր 1, էջ 128): Այդ դամբարանադաշտերը մինչև 1950-ա- կան թթ. դեռևս գոյություն ունեին, գտնվում էին «Սուղագանի սբխաչ» եկեղեցու շրջակայքում՝ Զրազդան գետի ձախ ափին «Բերի» աղբյուրի թաղամասում և եկեղեցու դիմացը՝ Զրազդան գետի աչ ափին, հիմնել տնկարաններ, որոնք այժմ նույնպես չկան: Զրազդան գետի ձախ ափի «Բերի» աղբյուրի թաղմասին կպած դամբարանադաշտի արևելյան մասը մնացել է Զրազդան-Սևան երկաթուղու հողապատմա- լորից (երկաթուղու կամրջի արևելյան ծայրին՝ Զոնանյան Միանիկի տան մոտ): Այդ պատմա- փոսեր-մնացորդները, որտեղից ամեն տարի գյուղի երեխաները պեղում-գտնում են ուլունքներ, ապարան- րից այժմ երևում են ավերված ու անպաշտպան, հսկողության կարիք ունեցող պեղված դամբարանների փոսեր-մնացորդները, անդառնալի վնաս պատճառելով գյուղի հազարամյակների պատմությանն ու մշա- ջաններ և այլ զարդեր՝ որոշումալի վնաս պատճառելով գյուղի հազարամյակների պատմությանն ու մշա- կույթին: Նույն ավերված, անպաշտպան ու անտեր վիճակում է նաև «Բերի» աղբյուրի թաղամասի դիմա- ցի՝ Զրազդան գետի աչ ափին գտնվող դամբարանադաշտը (երկաթուղու նույն կամրջի արևմտյան ծայրա- մասում՝ երկաթուղու պահեստ-ցիստեռների և նրանց կողքին անասնագոմերի մոտ ու շրջակայքում): Խորհել ու մտածել է պետք վերահաս-անվերադարձ կորստից փրկելու հազարամյակներ անխաբար մնա- ցած, իսկ այժմ ավերակված այդ անգին զանգերի մնացորդ- ավերակները:

Քարվանսարա կամարակապ շենքերի ավերակները պահպանվում են մինչև օրս : հետ, որի հիմնությամբ և Սմբատյանցի տեղագրության համաձայն.

Շախաբունյանցի և Սմբատյանցի տեղագրության համաձայն. ա) - «509, Քարվանսարայ, տունը 50, եկեղեցին անվանը Սբ. Աստվածածնի. և է հանդեպ Մաքրավանք գեղը՝ յարևելա կողմն գետոյն՝ ի տափարակ դիրս: Պանդոկն՝ յանուն որոյ կոչի այս գյուղ, է՝ ի հարավոյ և կառուցեալ է վասն երթևեկացն երևանայ և ի Տփիսիսոյ, այլ թե երբ յունե՛ չէ յայտ» (էջ 204): Այնուհետև՝ «510, Սուտեկեն, ջրառ կամ ջուր հարկանող. է առապար ինչ անմիջոց յեզեր գետոյն յարևելից նորա մերձ գեղն Քարվանսարայի ի հարավոյ, զճանապարհն, որ ընդ մեջ գետոյն և առապարին, ծածկե երբեմն յոր-

դրությունն ջուրը գետոյն և յարգելու զանցորդան, վասն որոյ կոչեցա՛մ ի բարբառ այլազգեաց յայն անուն: Յարեւից առապարին և յարեւտից պորտակ գեղջ երկու համանուն գիւղորայք» (էջ 205):

Պորտակ բառը ստուգաբանում ենք հետևյալ կերպ. այն բաղկացած է երկու բառերից՝ ա) պորտ - մարդու փորի կենտրոնական մասում փոքրիկ փոսիկ կամ որևէ բանի, առարկայի, կառույցի վրա դուրս ցցված կամ փոս ընկած տեղ և բ) ակ, ակն - ջրի ակունք, աղբյուր, աջք) է. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» հ. 2, էջ 1226 և հ. 1. էջ 14): Այսինքն ըստ Շախաթունյանցի Քարվանսարան բաղկացած է եղել երկու համանուն գյուղերից, որոնցից մեկը գտնվել է գետի արևելյան եզերքի Սուտեկեն- ջրառ կամ ջուր հարկանող (ջրի ալիքներով-հորձանքով ափին հարվածող, խփըլ) տափարակ մասում (որը «Խշոյ ակներ» աղբյուրների տեղամասն է, որտեղ իրոք, աղբյուրների ջուրը դուրս է գալիս ուղղաձիգ քարաժայռոտ լանջի փորի *պորտ-աջք-ակ-ակն-ակունք-պորտակներից*):

Սմբատյանցը (1896թ.) Գեղամաշեն-Մազազ գավառի գյուղերը նշելիս (էջ 284) գրում է «բառական համեմատությամբ Բերդք բառը փոքր-ինչ նմանություն ունի Պորտակ բառին (Օրդակլու), որ նույնպես Սևանայ մոտ ծովեզերքին է» (էջ 285): Օրդակլու գյուղը թարգմանվում է բաղանոց, շատ ընտանի և վայրենի բաղդեր ծովի վրայ գյուղիս հանդեպը լինելոյ պատճառով (էջ 421):

բ) Սմբատյանց - «Մաքրավանքից գնացինք դեպի Քարվանսարայ (պանդոկ-կարաւանոց) անունով գիւղը, անցնելով (Սուղակեան) Ջրահար անունով նեղուցովը՝ գետի եզերքովը հասանք փայտեայ կամրջին՝ որոյ վերայովն անցնելով գետի արևելյան կողմն՝ մտինք գյուղը և իջևանեցինք Յովհաննես քահանայի տանը: Գյուղը շինված էր մի ձորի մէջ տափարակ դրից վերայ, որոյ արևմտյան եզրիցը անցնում է Չանգու գետը և արևելյան և արևմտյան կողմից բարձրացած կան բարձր բլուրներն՝ որք ձգված են յարևելյանը Չամակիւլ լեռանց մոտիցը, իսկ արևմտեանը Չանջրլուայ սարերիցն անտառապատ և մացառուտ: Գյուղս անունը Քարվանսարայ՝ ստացել է այն պանդոկիցը՝ որ ցայսօր ևս ամբողջ դրութեամբ կայ և մնալ հարավային եզրին՝ քար ու կրով բավական ամուր շինվածքով: Ինչպես երևում էր քարերի-մաշված գրութիւնիցը, սա շինված պետք է լինի Երևանից դեպի Թիֆլիզ գնացող ճանապարհորդաց համար, մեր Արշակունի թագավորաց ժամանակ, ինչպես Մովսէս Խորենացին Արտաշէս մեր մեծ թագավորի համար գրում է (գլուխ ԾԹ) թե՛ ամենայն բարեկարգութիւն Արտաշէսի օրովը մտավ Զայաստան. ըստ որում՝ Երևանայ մինչև ցայս պանդոկն մի ավուր ճանապարհի է ոտավոր մարդոյ յամար... յիշեալ պանդոկը թեև ամբողջ է ամենայն շինվածքովն, սակայն ամենեկին գրուածոյ նշան չկարայինք գտնել և օրինակել, որից կարողանայինք իմանալ թե ե՞րբ և ո՞վ էր շինել: Ուստի և անյայտ՝ ժամանակն շինութեան և շինողի՝ անունը» (էջ 342, 345):

Այդպիսի պանդուխ իրոք եղել է: Աղբյուրներից մեկը այժմ դեռևս կա և կոչվում է «Քարվանսարայի աղբյուր»: «Քարվանսարա» աղբյուրին շատ մոտիկ՝ դեպի հարավ գտնվում է «Բերի» աղբյուրը, որն իր անունն ստացել է տեղում «բեր» լինելու պատճառով (Բեր - նշանակում է՝ 1. Մակաղատեղ, 2. Կիթ (այդ տեղում եղել է ոչխարների կեսօրվա հավաքատեղը հանգստի և կթելու համար, մակաղելու տեղ (եղ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» հատ. 1, էջ 188 և հատ. 2, էջ 954): Նրա դիմաց Զրազդան գետի աջ ափին գտնվում է «Խշոյ ակներ», «Խշացող ակներ» բազմաթիվ աղբյուրների խումբը: Այդ երկու աղբյուրների շրջակայքում էլ հիմնադրվել է գյուղը: Սուղագյան տեղամասից մինչև «Չախարտանք-աղբյուրները» և «Գյոլ լճակը»:

«Խշոյ» բառի ստուգաբանությունը (ենթադրաբար) - երևի այդ աղբյուրներիի ջրերը ակունքից դուրս են եկել խշոցով կամ անվանվել է գյուղում ապրող խշոյ դաս-ազգատոհմի անունով (խշոյ Առաքել, խշոյ Աշոտ, խշոյ-խուրշուդյան Կյորեդ) տունը կամուրջի մոտ - «Կարմնջի ականջում», որի տղան է խուրշուդյան Աղասին (երևի մաս խշոյը-խուրշուդ բառից է կամ ինչ-որ կապ կա - ստուգել-պարզել խուրշուդի իմաստը):

Գյուղը ընդարձակվել է հարավից հյուսիս (սշոյ) ակներ, Բերի, Քյոսի բոստանի, Քարվանսարա, Բնոյ (Բունիաթ)անների տոհմանունով), Չոխի, Հախպուտանք, աղբյուրների ակունքների մոտ: Գյուղում յոթ ջրաղացները՝ ամենահինը «Ճլմոյ» ջրաղացն է, որի մոտակայքում գյուղատեղի և դամբարանադաշտ: «Ճլմոյ» ջրաղացի գետի աջ ափին կառուցված լինելու փաստը նաև հուշում է, որ այդ ջրաղացի և «սշոյ» ակներ»-ի տեղանքում է «Պորտակ- Բերդատակը» (Հախաթունյանց, էջ 205) (այլապես անմարդաբնակ տեղանքում ինչու՞ պիտի կառուցվեր ջրաղացը):

Համաձայն Հախաթունյանցի (էջ 204-205) և Սմբատյանցի (էջ 342, 344) անժխտելի տվյալների Քարվանսարա գյուղը բաղկացած է եղել 2 մասերից - կենտրոնից՝ «յարևելից առապարին և յարևմտից պորտակ գեղջ երկու համանուն գիւղորայք» Հախաթունյանց (էջ 205): Մի կեսը (արևելյան) գտնվել է Հրազդան գետի ձախ ափին, Սուղազյան-Սուտեկեն-Սուղակեան տափարակ նեղուց տեղանքում՝ Սուղազյան սարի արևմտյան լանջի առապար (ծարքարոտ, ժայռոտ) ստորոտի և գետի միջև ու գետին չափազանց մոտիկ լինելու պատճառով հաճախակի հեղեղվել, ափնահարվել- ափնակոծվել է գետի ջրերով, որից և ստացել է իր անունը՝ «Սուղազյան – Ջրահար»։ Մյուս կեսը (արևմտյան) գտնվել է Հրազդան գետի աջ ափին՝ Սուղազյանի հակառակ կողմում, Մաքրավանք գյուղի դիմաց։ Հնում նաև գյուղն է կոչվել Սուղազյան։ Սուղազյանում այժմ դեռևս պահպանվել ու գոյություն ունի Հախաթունյանցի նշած Ս. Աստվածածին եկեղեցին, որ «հանդեպ Մաքրավանք գեղջ» (Հախաթունյանց, էջ 204), (այսինքն Մաքրավանք գյուղի դիմաց է Կ. Ս.), որին տեղացիներն անվանում են «Սուղազյանի սբխաշ»։ Իսկ այժմ գյուղամիջի բլրակի վրա գտնվում է Սուրբ Աստվածածին գործող եկեղեցին, որը կառուցվել է 1881-83 թթ. (գրված է եկեղեցու մուտքից ձախ հյուսիսային դռան ճակատին)։

գյուղի երկու կեսերը միացած են եղել փայտե կամրջով («Մաքրավանքից անցնելով Սուդակեան- Ջրա-
հար մեղուցովը՝ գետի եզերքովը հասանք փայտեայ կամրջին՝ որոյ վերայովն անցնելով գետի արևելյան
կողմն...»), (Սմբատյան, էջ 342,345):

Քարվանսարայ- Քարվանատուն-Պանդոկ եկող ճանապարհը անցնում էր այդ պանդոկից հարավ - արևելք գտնվող սարի արևելյան լանջի քարքարոտ ստորոտի և Ձանգվի միջև ընկած մեղուցով, որի անունը նույնպես Սուղազյան- Սուտեկեն էր: Շախաթունյանը (էջ 204-205) թարգմանում է՝ «Սուտեկեն- Ջրառ կամ ջուր արկանող», իսկ Սմբատյանը (էջ 344՝ «Սուղակեն - Ջրահար»:

Իրոք, այս տեղից վերցվել է մի մեծ առու ջուր, որը Չանգվի ձախ ափով իջնելով դեպի ցած՝ հարավ - արևմուտք, ներքևում աշխատեցրել է «Մաքրավանքայ Ավետիս քահանայի ջրաղացն» (Սմբատյանց, էջ 342), Ն. Ախյանի «Շառոյի» ջրաղացը, մալական Ավդեի ջրաղացն ու սղոցարանը /այստեղ էր նաև «Ավդեի մեղրի ճանճ պահելոյ ծաղկանոցն» (Սմբատյանց, էջ 342) և Աղբյուրակ- Աղփարայի «Պողոսի» ջրաղացը (որոնք այժմ մնացել են Հրազդանի լճի տակ)։ «Զրահար»- նշանակում է գետի հունի ամրացված մաս՝ գետի հոսանքի ուժեղացած հարվածն ընդունելու համար (պատմեջի մոտ), ջրի հարվածն իր վրա ընդունող (եղ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» հատ. 2, էջ 1246)։ Այժմ Սուղագյանի այդ նախկին մեղուցի տեղանքում է գտնվում Հրազդան քաղաքի ջերմոցներին ջուր մղող պոմպակայանը, որը չի գործում։ Քարվանսարա- Վանատուրի շատ հին բնակատեղի- բնակավայր լինելու ապացույց են նաև այդ- գյուղ թաղամասի նախկին բազմաթիվ անվանումները՝ Գառնեկին (Գառուզեղ, Գառուզիղ), Գառնեղի, Գառնըյարեխ, Կառնըյարեխ, Կարնըյարեխ, Ղարնիյարեխ, Ղարնիզ, Կապուտխան («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» հատ. 1, էջ 52)։

Այսպես՝ 1. Գառնեկին, Գառնգեղ, Գառուգիղ, Գառնեղի անվանումների հիմքը գառն, գառագեղ, գառագիղ բառերն են (գառն – նշանակում է ոչխարի գառ: Գառուգեղ, գառագիղ - գազաններ պահելու վանդակ, արգելարան, բանտ, զնդան, որոգայթ): Ուրեմն պետք է ենթադրել, որ այդ պանդոկ- քարվանսարայ- քարավանատունը իրեն կից կառույցներով ծառայել է նաև, որպես գառներ (ոչխարներ), գազաններ պահելու վանդակ, արգելարան:

Նշենք նաև, որ Գառնեկին բառը օգտագործել է հայագետ Պյոբուան:
2. Գառնդյարըխ, Կառնդյարըխ անվանումների հիմքը երկու բառեր են՝ ա) Գառնը- Կառնը- Կարնը (թուրքերեն նշանակում է որովայն, փոր), բ) յարըխ (թուրքերեն նշանակում է ձղված, պատռված, պատռվածք): Այսինքն դա Սուղազյան-Սուտեկեն սարի արևմտյան լանջի խորափոր պատռվածք փորն է, որը ներկայումս էլ կա և որի վրա՝ վերևի մասում գտնվում է «Սինամի» աղբյուրը, իսկ պատռված- փորն է, որը ներկայումս էլ կա և որի վրա՝ վերևի մասում գտնվում է «Սինամի» աղբյուրը, իսկ պատռված- դազյան Սարի արևմտյան լանջի ստորոտում է գտնվել իմ հայրական ազգատոհմի՝ «Քյոսի» բոստանը
«Քյոսի» աղբյուրով, որտեղ ավելացնենք, որ լանջի պատռվածքի պատճառով Կարնիյարըխ (փորը ձղված, «Քյոսի» աղբյուրով, որտեղ ավելացնենք, որ լանջի պատռվածքի պատճառով Կարնիյարըխ (փորը ձղված, պատռված, խորափոր) անվանումն է ունեցել նաև ներկայիս Արայի լեռը Աշտարակի շրջանում: Այդ մասին գրված կա իս. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում՝ «ես ժամանակ էր, որ մեկ օր ընկերներին հավաքեց

(խոսքը Աղասու մասին է Կ. Մ.) գնաց ֆորս Համգչիման ու Զբխլու անցկացավ Ղարնիյարաղ» (1981թ., էջ 236.346): Նույն «Վերքի» ծանոթագրությունների մեջ նաև ստուգաբանվում է այդ բառը՝ «Ղարնիյարաղ –

3. Դարնիյարընիս- ի հիմքը Դար- Դարար և յարընի բառերն են: «յարընիս» արդեն բացատրել ենք, իսկ Դար, Դարար - նշանակում է հանգիստ, դադար, դադար առնելու հանգստանալու տեղ- այսինքն դա նույն ժամանակ, ժամանակ, ժամանակահատված- ի հանգստարան- կացարան- իջևանատունն է :

4. Կապուխտի սան տեղանվանումը, որպես բառ բաղկացած է երկու բառահիմքից. ա) կապուտ, որն ունի 2 իմաստ՝ 1. (Գրաբար) - կողոպուտ, ավար, թալան, և 2. կապուտ- ձուկ, կապտաձուկ, կապույտ գետածուկ:

բ) *խան* – իջևան, իջևանատուն, կացարան, կայան, ռանսփոլան, գլխավոր մասը:
Դրա ուղղակի ապացույցն է և այն փաստը, որ «Կապուտ» տեսակի ձկան առկայությունը հաստատում է նաև Սմբատյանցը. «Ձանկուն ընծայում է... որոնողին, խնդրողին համեղ կարմրախայտ և *կապուտ* և մուրգայ և ճանառ ձկներ» (Տեղեկագիր... էջ 296):

Քարվանսարայ- Կապուտխանին շատ մոտիկ, իդեալի հյուսիս մինչև 1997 թվականը գոյություն ուներ մի կիսավեր եկեղեցի, որը կոչվում էր «Կապուտ խաչ» (Կապուտխան գյուղի անունով), որտեղ ըստ ավանդույթի Քարվանսարայ- Քարավանատուն – Կապուտխան գյուղի և շրջակա գյուղերի բնակիչները «բուժ-տուն- վանատուրքի Ռուբիկ Գալստյանը 1997-99 թթ. այդ «Կապուտխաչ» եկեղեցու ավերակների տեղում

կառուցել է նոր փողոցիկ եկեղեցի, որը Աճի մայրաքաղաքի «Դովլի եկեղեցին» ծիշտ սնամանակ է:
«Քարվաճառարա» աղբյուրի արևմտյան ծայրամասում է գտնվել «Մաղոյ» բոստանը, որը մի կատարյալ
դրախտ գյուլիբաղ (ծաղկանոց այգի) է եղել և բազմատեսակ կանաչի ու պտուղներ մատակարարել ամ-
բողջ գյուղին:

Այդ այգի-բոստանում 1943թ. ամռանը գյուղացիները հյուրասիրություն՝ աղ ու հաց են մատուցել Քարվաճառար հյուր եկած Սովետական Միության Հերոս Արցախի-Շուշեցի Նելսոն Ստեփանյանին: Սասուն Միջայելյանը մասնակցել է նաև Շուշիի ազատագրման մարտերին: Ուրեմն նրա հայրենաշեն հաջորդ քայլը պետք է լինի «Քարվաճառար» աղբյուրի ակունքի մաքրում- բացումը (որը լցված է կենցաղային աղբով) և ակունքից ու «Մաղոյ» բոստանի տեղանքից մինչև լճակ- ջրավազանն ընկած տեղամասում մի փոքրիկ բնակավայրի կառուցումը:

անտառապուրակ-գրոսայգի հիմնելը՝ այն կոչելով Ն. Ստեփանյանի անունով (կամ այդ տեղում կա մի ժայռ, որի վրա փորագրվի կամ կպցվի մի քարե հուշատախտակ նշելով, որ 1943թ. այս տեղում այցելել և հյուրասիրվել է Նելսոն Ստեփանյանը:

Հրազդան գետի ծախ և աջ ափերին լճակ ու ռեստորան կառուցելով՝ Ս. Միքայելյանը կարծես իր հոգու աչքերով ու հայրենի գյուղի նախնիների արյան կանչով կամրջել է գյուղի երկու հին թաղամասերը՝ գյուղի անցյալն ու ներկան՝ ոգի ու շունչ տալով վաղուց մոռացված պատմական Սուղազյանին: Իսկ Ն. Ստեփանյանի անվան անտառապուրակ-գրոսայգի հիմնելով նա կկամրջի նաև Քարվանսարա- Սուղազյան – Վանատուրն ու Շուշի- Արցախը, որի համար ինքն ու համագյուղացի ազատամարտիկները արյուն են թափել անուն, փառք ու պատիվ բերելով հայրենի Քարվանսարա- Վանատուրին, Հրազդան քաղաքին ու հայ ժողովրդին:

Ուրեմն Ձաքարյաճների՝ Դվինից դեպի իրենց զինապահեստների ու հարստության պահեստավայր Լոռի բերդ և իշխանական- հոգևոր կենտրոն Խոժոռնի բերդ զնացող ճանապարհի մի ճյուղը անցել է Սուղազյան (Քարվանսարա) - Թայշարուխ (Մեղրածոր) հատվածով և ի վերջո Թայշարուխում՝ իր կառուցած եկեղեցում է իր վերջին հանգրվանը գտել- թաղվել Իվանե Ձաքարյանը (Սմբատյանց, էջ 368,369):

Ծորափոր- Ծորուփոր գավառը դա հայկական Շուշավեր- Շահումյան գյուղի (Վրաստանում) և Շուշավեր գետի հովիտն է մինչև Դեբեդ գետի ստորին հոսանքը Վրաստանի Մառնեուլի շրջանում, Ծոփագետի ափին գտնվող Ծոր բերդ- բնակավայր կենտրոնով, որտեղ արդյունահանվում է պղնձի հանքաքար: Նրա մեջ էր մտնում Հայաստանի Թումանյանի շրջանի Ախթալա ավանի պղնձահանքավայրը: Վրացիները Ծորափորը կոչել են Սոմխեթ, իսկ թուրքերը՝ Բորչալու- թուրքական մի ցեղի անունով, որոնց Շահաբասը 1603 թ. բերել և բնակեցրել է այդ տեղում («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 2, էջ 859):

Սուղազյանով է անցել նաև Սևանից Երևան ու Ապարան (Նիգ) տանող հին ճանապարհներից մեկը: Եվ վերջապես Սուղազյանով է անցել ու Սուղազյանում է թուրքերի դեմ կռվել ու Նաղի խանին սպանել Խաչատուր Աբովյանի «Վերքի» գլխավոր հերոս Աղասին («Սուղազյան մեյլ օր Նաղի խանին՝ էս ահագին գազանին, որ հարյուր մարդի չէր ասիլ, թե աստված ա ստեղծել, են տեղը քցեց, որ իր մարդկերանցովը մեկ բարձր թափից վեր ընկավ ու ղզլբաշի հողը մտավ, որ պրծավ, թե չէ Աղասու ձեռին պետք է իր թուր սպանած անմեղ հայերի արնի քառըմեն տար») (Խ. Աբովյան «Վերք Հայաստանի». 1981թ., էջ 183-184 և էջ 340-ի ծանոթագրություններ):

Ախտա-Հրազդանի տարածքը նախկինում մտնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի մեջ, որը սահմանակից էր հյուսիսից՝ Գուգարքի Տաշիր ու Արցախի Մեծկուենք, հարավից՝ Մազազ ու Կոտայք և արևմուտքից Նիգ գավառներին: Այդ գավառը հիմնականում ընդգրկել է ներկա Հրազդանի ու Սևանի շրջանների մեծագույն ու Կրասնոսելսկի շրջանի հյուսիսային մասը, ինչպես նաև Աղստև գետի վերին հոսանքի շրջանը՝ հին Հովքը կամ Միափորը (այժմ Դիլիջան):

Հայկական պետականության անկումից հետո պարսիկ և թուրք տիրապետողների կողմից օգտագործվել է որպես ամառանոց և արոտավայր: 13-15-րդ դարերում այդ տարածքում ստեղծվել են հայկական իշխանություններ (Ձաքարյան, Պախլավունիներ, Խաղբակյաններ կամ Պոռոշյաններ): Հետագայում վարչականորեն մտնում էր Երևանի խանության Հայկական մարզի Նոր Բայազետի գավառի, իսկ 1922 թվականից՝ Երևանի գավառի Ներքին Ախտալի գավառամասի մեջ:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄԵԹՈԴԻԿԱ

ՏՐՈՇՎՈՂ ՈՐՈՇԻՉԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

Որոշիչը գոյականով արտահայտված անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս տվյալ գոյական անդամի որակական, քանակական և նման կարգի հատկանիշները՝ տարբեր կողմերից բնորոշելով իր լրացյալը: Ուսուցիչը տրոհվող որոշիչի ուսուցումը սկսում է՝ աշակերտներին հիշեցնելով, որ այն կարող է արտահայտվել գոյականի ուղղական, սեռական, բացառական և գործիական հոլովներով (*քար* սիրտ, *ծով* աչքեր, *գարնան* զարթոնք, *սարի* շուշան, *մարմարից* արձան, *տուֆից* շենք, *շնիկով* տիկին, *մսով* փլավ), ածականով (*խելացի* երեխա, *արծաթե* գդալ), թվականով (քսան աշակերտ, *երրորդ* դասարան), դերանուններով (*յուրաքանչյուր* ծնող, այսպիսի երկիր), հատկանիշ ցույց տվող դերբայներով (*քնած* երեխա, *լացող* ուռենի, *խմելու* ջուր), մակբայներով (*դանդաղ* ընթացք, *արագ* վերելք), տարբեր բառակապակցություններով (*վաղուց մոռացված* երգ, *պտուղ չտվող* ծառեր և այլն):

Ուսուցչի պահանջով այս և նման օրինակները գործածվում են նախադասության մեջ: Աշակերտներին արդեն ծանոթ այս նյութը ուսուցչի օգնությամբ կրկնվում է և հարցերի միջոցով ամփոփվում: Ի՞նչ է ցույց տալիս որոշիչը, ո՞ր խոսքի մասերով է արտահայտվում, բերել գոյականի տարբեր հոլովներով, ածականով, դերբայներով արտահայտվող որոշիչների օրինակներ և գործածել նախադասությունների մեջ:

Ուսուցչին օգնելու նպատակով ներկայացնում ենք ժամանակակից հայերենի տրոհվող որոշիչի արտահայտությունը՝ գիտակցելով, որ առանց այս տեսական նյութի և՛ ուսուցչի, և՛ աշակերտի համար դժվարին կլինի ճիշտ կողմնորոշվել տրոհվող լրացումների կառուցվածքային առանձնահատկությունները բացատրելիս:

Տրոհվող որոշիչն արտահայտվում է՝

1. *Ետադաս բազմակի ածականներով*, որոնք բացահայտում են որոշյալի հատկանիշը տարբեր կողմերից: Ածականով արտահայտված ետադաս որոշիչը տրոհվում է այն դեպքում, երբ նախադասության բազմակի անդամներ են: Օր.՝ Իրիկունը եկավ, տնետուն մտավ, վառեց ճրագներ՝ *կարմիր ու սպաժառ* (Ավ. Իսահակյան, հ.1, էջ 123): Նրա ականջներից կախված էին խաղողի ողկույզ հիշեցնող զինվոր՝ *չողուն ու հմայիչ* (Ս. Խանգալյան, 2, 90): Որքան կարելի է կույր լինել և չտեսնել մեր շտապողականությունը՝ *անհեռատես ու զգացունքմային* (Պ. Ջեյթունցյան, 2, 164):

Երբեմն բազմակի ածականները կարող են հանդես գալ բառակապակցություններ կազմած իբրև համասեռ որոշիչներ՝ երկաստիճան կառույցներով: Օր.՝ Լինում է իբր գյուղացի մի մարդ՝ *աղքատ, օրական ապրուստի կարոտ* (Հ. Թումանյան 1,231): Տերասածև բարձրանում են ժայռերը՝ *մեկը մյուսից խոժոռ ու ահռելի* (Բակ. Ե, 1,222):

Տրոհվող որոշիչները անվանական, գոյականական ստորոգելիների մոտ հանդես են գալիս որպես տրոհվող լրացումներ՝ արտահայտելով բաղադրյալ ստորոգյալի վերադրի հատկանիշը բազմակողմանիորեն: Օր.՝ Նույն աղջիկն էր՝ *չքնաղ բոլորից, հոգուս մտերիմ, հարազատ այնպես* (Ա. Իսահակյան, 1,180): Աշխարհն էլ